ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍ

Որդի՛ք երկանց և վաստակոց
  Երա՛մք մեղուաց դուք ժրաջան,
  Ո՛ր բան բաւէ ի գովասան
  Աշխատասէր կենաց ձերոց։
Անսեթևեթ մանկունք Բնութեան
  Ձեր քաջ ճարպիկ ձեռք են միայն
  Որք զարդարեն զերկիր և տան
  Զիւր բոլոր շուք գեղեցկութեան։
Ո՞ւր ուրեք է համայն յերկրի
  Ուր տեսողաց յաչաց վրիպի
  Ձեր ժիր ձեռաց գործողութիւնք
  Եւ վաստակոց ձեր մեծ արդիւնք։
Ի քաղաքի և ի դաշտի
  Ի մէջ ծովու և ցամաքի,
  Ի գլուխս լերանց ի խորս երկրի
  Ձեր քաջ բազկաց գործք են յայտնի։
Ժամանակի անիւք գլին
  Տարիք դառնան, դարք հոլովին
  Մի սերնդոյ միւսք հետևին,
  Նորք զարգանան և հինք մեկնին։
Այլ ոգի ձեր է միշտ անմահ
  Նոյն է միշտ և նոյն կայ հնայ
  Արևպաշտից հրոյ նման
  Է միշտ անշէջ ի բորբոքման։
Միտք քաջակիրթք իբր առաջնորդ
  Ճարպիկ ձեռաց լինին ուղղորդ
  Զմէն մի արուեստ ձեր զմայլելի
  Գործեն ևս չքեղ ևս սքանչելի։
Ի հնուց անտի աշխատութեան
  Գործք մեծամեծք մեզ ի յայտ գան,
  Ցեօթն հռաչալեաց ոմանք դեռ կան
  Անջնջելի իբրև արձան։
Ահեղ բրգունք Եգիպտոսի
  Սփինգս և այլք ի նոյն կարգի
  Այլ թէ որչափ և սքանչելի
  Ո՛չ օգտաւէտ էին գործ մի։
Ի մեծամեծ քաղաքս երկրի
  Թո՛ղ մեզ առնուլ յուշիկ ճեմ մի,
  Անդ գան աչաց մեր յանդիման
  Ձեր գործք չքեղ զարմանալի։
Մեծակառոյց պալատք չքեղ
  Դարպասք, պանդոկք պալատանման
  Շէնք հոյակապք, ժողովարանք
  Ճարտարարուեստ կազմեալ ի գեղ։
Կաթուղիկէք եկեղեցիք,
  Ի ձև պատշաճ և գեղեցիկ,
  Դահլիճք, զաւիթք, և լսարանք
  Արհեստանոցք, և թանգարանք։
Արձանք, կոթողք յիշատակի
  Աշտարակք և չքեղ բրգունք,
  Գեղարուեստից նիստք զմայլելի,
  Դատարանք և թատերաց տունք։
Տաճարք և շէնք յոյժ փառաւոր
  Գիտութեանց և ուսմանց բոլոր,
  Անկելանոցք բժշկարանք
  Եւ այսպիսիք այլ բիւրաւոր։
Բազմամղոն փողոցաց շար
  Խնամեալ, մաքուր, կազմ և յարդար
  Սալայատակ պողոտայովք
  Հովանացեալ պերճ ծառուղովք։
Խանդակակազմ ի փոր երկրի
  Անդ տեսանեմք զևս հրաշալիս,
  Մղոն, մղոն տարածութեամբ
  Կամարակապ զգետնուղիս։
Ի յելևէջս մեքենաշարք
  Իջեալ ըսթափ ի ծոց երկրի
  Ազատ և դիւր առնեն ուղի
  Մարդիկ ի կառս ելեկտրաշարժ։
Յերկրի յևս ի խոր ի ծոց
  Վարազուրեալ յաչաց մերոց
  Կան ագուգայք այն ահագին
  Որք նուիրեն սպաս անգին։
Իբր հաստաբուն արմատ ծառոյ
  Կան տարածեալ ի փոր գետնոյ,
  Շառաւիղեալ յանթիւ ի ճիւղս
  Որպէս արեան երակք մարմնոյ։
Գործք տքնալից աշխատանաց
  Երկարատև յոլով ամաց
  Անզարդ, անշուք, անփառաւոր
  Բայց գործ ո՛րչափ յոյժ հարկաւոր։
Գան յաչաց տես և անհամար
  Մետաղաթելք, որք շարիշար
  Են ձողաբարձ յօդ համբարձեալ
  Կամ ընդ գետնով կան տարածեալ։
Ընդ որ անցեալ կայծականց թափ,
  Իբրև ծառայ ժիր և սթափ
  Հլու, հպատակ ձեռին մարդկան
  Զօնեն՟սպաս մեծ և պիտևան։
Լուսաւորեն զմեզ ի մթան,
  Առնեն օդ զով ի ջերմութեան,
  Զմեծամեծ կառս մեքենայս,
  Յարազընթաց դնեն շարժման։
Ծագաց ի ծագս երկրի համայն,
  Ընդ գլուխս լերանց, ընդ ծով, ցամաք
  Շանթեալ ընդ թափ, գնան դառնան
  Բերեն, տանեն պատգամ և բան։
Զայլ այսպիսի հազար ու մի
  Տեսանեմք մեք ի քաղաքի
  Պտուղս անդուլ աշխատանաց
  Գործս սքանչելի ձեռաց ձերոց։
Ի գիւղօրէս ի մէջ դաշտաց
  Զի՞նչ գան հանդէպ մերոց աչաց.
  Նոյն անդադար անխոնջ վաստակ
  Նոյն սքանչելի արդիւնք բարեաց։

© National Library of Armenia

Աստ ծառաստանք, բարւոք խնամեալ
Պտղովք անոյշ ծանրաբեռնեալ,
Ընդ թուփք ծաղկանց հազարերանգ
Կանաչագեղ շրջանակեալ։

Անդք ուռճացեալ և բեղմնաւոր,
Տածեալ ջանիւք յոյժ քրտնաթոր
Տատանին զերթ ալիս ի ծով
Ոսկեհատիկ իւրեանց հնձով։

Այլուր իբր ձող յօդ ամբարձեալ
Բազմականգուն յերկայնութեան,
Կան ծխնելոյզք, քարոզք դարձեալ
Անընկճելի աշխատութեան։

Այդ ծխնելոյզք, որք են նշան
Ճիշդ յայտարար երկրի միոյ
Յառաջն ի կոյս ընթանալոյ
Բարգաւաճման և զարգացման։

Բազմահնար մեծ գործարանք
Ջրաղացք և մեքենարանք
Հսկայազօր շոգւոյն միմամբ
Գլին, շարժին ահեղ թնդմամբ։

Արտադրեն մեզ անհաշուելի
Պիտոյս, բարիս, շքեղութիւն,
Դիւր գործեն իսկ զտարժանելի
Մարդոյ ձեռաց աշխատութիւն։

Ո՞վ են սոքա որք իջանեն
Ի խորութիւն զարհուրելի
Ի սիրտ երկրի, և ելանեն
Դէմք սևացեալ ձեռք աղտեղի։

Որք անվկանդ հանդէպ գնան
Դժուարութեանց, վտանգի մահուան
Ի ծոց գետնոյ հատեալ խանդակ
Մինչ ի ծովու ի խոր յատակ։

Կորզեալ հանեն ի փորոտեաց
Երկրի անհուն գանձըս բարեաց,
Երկաթ, արծաթ, ոսկի դեղին
Եւ ոսկի սեաւ, որ ևս անգին։

Դարձեալ յայլ կողմն, անդ տեսանին
Այդ երկաթի գիծք ի գետին
Որք բիւրաւոր, միլիոնաւոր
Ի մղոնս իւրեանց գնան տարածին։

Ցերկրի վերայ, ներքոյ գետնոց
Կամրջակապ վերայ գետոց,
Ի լանջս բլրոց, յերեսս լճաց
Ի զառիվայրս հովտաց բլրոց։

Ելանեն, վեր համբառնան
Պտոյտ, պտոյտ յօձի զալար
Եւ անարգել գործեն ժաման
Ի բարձրաբերձ լերանց կատար։

Նա իսկ ծակեալ և խանդակեալ
Զփոր լերանց, թափ անցանեն
Եւ զհեռաւոր երկիրս բերեալ
Առ միմեանս միաւորեն։

Զիք արգել կամ դժուարութիւն
Կամ խոչ ինչ զոր աշխատութիւն
Զկարէ ընկճել, բառնալ ի բաց
Զայս հրաշալի գծից ընթաց։

Սոցա վերայ, յար անդադար
Ուղևորեն ի մօտ ի տար
Բիւրուց, բիւրուց խումբք կառաց
Լծորդեալ յիրեարս և շար ի շար։

Բերեն, տանին ըզբիւրաւոր
Ի սփիւռ երկրի մարդ ուղևոր
Եւ ապրանաց անթիւ բեռինս
Զպիտոյս կենաց, մեզ հարկաւոր։

Ի ծով ի կոյս զաչըս ձգեալ
Մնամք անդէն դարձեալ ապշեալ,
Անդ ոչ ականց զան յանդիման
Հոմերական, Արմադական

Ծիծաղելի եզերագնաց
Փծուն նաւակք թիավարաց.
Այլ մեծամեծ և հրաշագեղ
Պալատաձև դարպասք շքեղ։

Կամ ևս լաւ է կարծեմ ասել
Քաղաք փոքրիկ, գիւղք չարժական
Լի բազմաթիւ անցորդ բնակչօք
Լի արգասեօք երկրի համայն։

Որք իբր հսկայք անընկճելի
Ամենազօր և անվեհեր
Երես առնեն ոչ փոթորկի
Ոչ իսկ ալեաց յոյժ կատաղի.

Ոգևորեալ հրեղէն ուժով
Թնդայ նոցա սիրտ պողպատեայ
Սահին գնան ի մշտօրեայ
Ցընթացս իւրեանց հապճեպ փութով։

Ծագաց ի ծագս զերեսս չափեն
Ովկիանու մեծ ահագին,
Իբրև կամուրջ զմի ցամաք
Ընդ ցամաքի միւսոյ կցեն։

Զի՞ր ձեռաց են այս ամենայն
Գործք ի սփիւռս երկրի համայն
Եւ այլ հազարք և բիւրաւորք
Զորս ի պատմել պէտք են հատորք։

Անէծք, ասի, զաշխատութիւն
Եբեր յերկիր վասն մարդկան,
Այլ ճշգրտիւ դարձուցիք զայն
Յերանական, դուք, յօրհնութիւն։

Ո՞ղջոյն Ձեզ ով քաջք ի քաջաց.
Ո՛չ թագաւորք, և ո՛չ իշխանք
Ո՛չ զօրավարք յոյժ յաղթականք
Գան ի կըշիռ ձեր արժանեաց։

Այլ ճշմարիտ, անյաղթելի
Դուք էք հերոսք այսր աշխարհի
Եւ ձեր գործք իսկ կան և մնան
Ձեզ յիշատակ անջինջ արձան։

Մէն մի կաթիլ քրտանց ձերոց
Է՛ մեծարժէք քան զմարգարիտ
Մէն մի արդիւնք ձեր վաստակոց,
Է իբր անոյշ ծաղկանց փթիթ։

Թ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ